

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա Ն Ո Ւ Շ

(Պ Օ Է Մ Ա.)



ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ



Հրատարակութիւն ԱՊԱՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՊԵՅՐՈՒԹ

1935

89.99
7-95

19 NOV 2011

391.99

թ-95

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա Ն Ո Ւ Շ

(Պ Օ Է Մ Ա.)



ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ



Հրատարակութիւն ԱՊԱՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՊԷՅՐՈՒԹ

1935

ՏՊ. «ՎԱՀԱԳՆ»

Հ. ՅԱԿՈԲԵԱՆ «ԱՄԵՐԻԿԱՆ ԲՐԷՍ»

ՊԷՅՐՈՒԹ

23.04.2013

32253

JV 2011

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

(Համբարձման գիշերը)

Բազմաձ լուսնի նուրբ շողերին,
Հովի թեւին՝ թըռչելով
Փէրինները սարի գլխին
Հաւաքւեցին գիշերով:

«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Զըքնաղազեղ ոգիներ,
Եկէ՛ք, ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամնռ:

Օխան աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխալ ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սըրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին...

Ս.փսո՛ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ս.փսո՛ս իգիթ դու եարին,



10910-21

Ափսո՛ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՛ս էդ ծով աչքերին...»

Ու նըրանց հետ ցող-արցունքով
Լըցւած սըրտերն ու աչքեր՝
Սարի ծաղկունք տըխուր սիւգով
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ,
Վո՛ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ իգի՛թ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...»

Եկէ՛ք, քոյրե՛ր, սեգ սարերի
Չըքնաղագեղ ոգիներ...»
Ու փէրիններն այսպէս տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հնչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցոլքն արեւի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուզեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստաբուն,
Ու շեռնային վըտակների
Սլիքները պաղպաջուն:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ե Ր Գ

I

Կանչում է կրկին, կանչում անդադար.
Այն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու՛ թեւերն ահա փըռած տիրաբար՝
Թըռչում է հոգիս, թըռչում դէպի տուն:
Ուր որ հայրենի օջաղի առաջ
Վաղուց կարօտով ըսպասում են ինձ,
Ու ձըմբան երկար գիշերը նըստած՝
Խօսում են Լօռու հին-հին քաջերից:

Դէպ այն սարերը, որ վէս, վիթխարի,
Հարբած շարքերով բըռնած շուրջ պարի,
Հըսկայ շուրջ պարի բըռնած երկընքում,
Հըրճւում են, ասես այն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի զըստեր,
Որ Դեւ-Ալ, Դեւ-Բէթ և այլ հըսկաներ,
Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լօռի:*)

II

է՛յ հին ծանօթներ, է՛յ կանաչ սարեր,
Ահա ձեզ տեսայ ու միտըս ընկան,
Առաջըս եկան երջանիկ օրեր,
Սիրելի դէմքեր, որ հիմի չըկան:

(*) Առասպելն ասում է թէ՛ Դեւ-Ալը (Դւալ-սարը),
Դեւ-Բէթը (Դեբեղ գետը) եւ ուրիշ դեւեր՝ յափշտակել
են Արագածի աղջիկը, բերել են Լօռի:

Անցե՛լ են, ոնց որ ծաղկունքը պէս-պէս,
 Որ անցած գարնան կային ձեր լանջում,
 Անցե՛լ ձեր պըլխի հերւան ձիւնի պէս,
 Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
 Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
 Քրքացած հոգիս ողջունում է ձեզ,
 Թըռչուն կարօտով փընտռում ձոր ու լեռ,
 Գիւթական ձայնով կանչում է հանդէս:
 Դո՛ւրս եկէք կըրկին շիրմից, խաւարից,
 Դո՛ւրս եկէք տեսնեմ, շօշափեմ, լըսեմ.
 Կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
 Լըցրէք սոէտի հաճոյքը վըսեմ...

III

Եւ մութ այրերից, մամռոտ ժայռերի,
 Թաւուտ ծըմակի լըռին խորքերից
 Մանուկ հասակիս հընչուն ծիծաղի
 Արձագանգն անա լըսում են նորից:
 Թընդում է զըւարթ աղմուկը բինի,
 Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,
 Ու բոլորն անա նորից կենդանի
 Ելնում են աշխոյժ վազորդեան մութից,
 Ու թարմ, ցօղապատ լեռների լանջում...
 Սո՛ւս... ականջ արա, - հովիւն է կանչում...

IV

— Աղջի՛, անասուեա՛ծ, նըստիր վըրանում,
 Ի՛նչ ես դուրս դալի, խելքամաղ անում,
 Աչուդ ես շինել, չեմ հանդըստանում,
 Խաղեր կապելով,
 Զօլեր չափելով,

Ոչխարըս անտէր,
 Ընկեր են հանդեր:
 Ամա՛ն, էրեցիր սիրտս քու սիրով,
 Ոտըս կապեցիր թել-թել մագերով,
 Էլ չեմ դիմանալ կը փախցնեմ զօրով:
 Ա՛յ սարի աղջիկ,
 Ա՛յ սիրուն աղջիկ,
 Ա՛յ դու կարմրաթուշ
 Թուխամազ Անուշ:
 Քու հէրն ու մէրը թէ որ ինձ չը տան,
 Արին կը թափեմ ես գետի նըման,
 Սարերը կընկնեմ, կորչեմ անգիւման,
 Ա՛յ սեւ աչքերով,
 Ա՛յ ծով աչքերով,
 Ունքերըդ կամար
 Աղջիկ, քեզ համար:

V

Երգում է Սարօն, ու չի կարենում
 Աղջիկը հանգիստ նըստել վըրանում.
 — Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ.
 Դու չես իմանո՞ւմ. ականջ դի՛ր, տե՛ս...
 — Հերիք է, Անո՛ւշ, ներս արի դագէն,
 Քանի՞ դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
 Տեսնողն էլ կասի — ի՞նչ աղջիկ է սա,
 Հազար մարդի մօտ կերթայ կը խօսայ:
 — Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին,
 Ի՛նչքան աւուկ է տալի կանանչին.
 Նանի՛, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
 Էն սարի լանջին «ջան գիւլում» ասեմ:
 — Հանգիստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
 Ի՞նչ ունիս ջահել չորանների մօտ,

Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
 Պարկեչտ կաց, աղջի, ամօթ է, ամօթ:
 — Ա՛խ, սիրտըս, նանի՛, չը գիտեմ ընչի՛
 Մին լաց է լինում սեւակինս՝, տըխուր,
 Մին թեւ է առնում, ուզում է թըռչի՛,
 Չը գիտեմ թէ ուր, չը գիտեմ թէ ուր...
 Նանի ջան, նանի, ես ի՞նչպէս անեմ,
 Ի՞նչ անի անքուն անհանգիստ Բա՛լէդ...
 Նանի ջան, նա՛նի, կուժը թող թռնեմ,
 Աղբիւրը գընամ աղջիկների հետ...»

VI

Կըժերն ուսած՝ թըրըռալով՝
 Ջուրն են իջնում աղջիկներ,
 Խընդում իրար ուսի տալով,
 Երգը գընգում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է գալի,
 Դօշ է տալի, փըրփըրում,
 Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
 Հօնգուր-հօնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, դու՛լալ ջըրեր,
 Որ գալիս էք սարերից,
 Գալիս՝ անցնում հանդ ու չօրեր,
 Եարս էլ խըմե՛ց էդ ջըրից:

Եարաբ խըմեց, եարաբ հովցաւ,
 Վառւած սիրտը էն եարի,
 Եարաբ հովցաւ, եարաբ անցաւ
 Անքուն ցաւը ջիգեարի...

— Աղջի՛, քու եարն եկաւ անցաւ,
 Վառւած, տարւած քու սիրով,
 Էրւած ջիգեարն եկաւ անցաւ,
 Չը հովացաւ պաղ ջըրով...
 Ամպի տակից ջուր է գալի,
 Դօշ է տալի, փըրփըրում.
 Ա՛խ, իմ ագիդ եարն է լալի
 Հօնգուր-հօնգուր էն սարում:

VII

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
 Ձայն տըւաւ թաքուն մի խաւար կասկած.

— Էն ե՛րբ էր՝ Անուչն իր կուժը առաւ,
 Աղբիւրը գընաց ու ետ չը դառաւ...
 Ամպերն եկել են սարերը պատել,
 Ձորերը լըցել, իրար փաթաթել,
 Հազար չար ու շառ հազար հարամի՛
 Հազար ջահելներ վըխտում են հիմի...
 Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ՝
 -Ո՞ւր կորար, Անո՛ւչ, ա՛յ մազըդ կըտրած...
 Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
 Կանչում է, կանչում անահ զաւակին.

— Աղջի՛, սեւասիրտ, քու ահա կըտրի,
 Աղջիկը մինակ ձո՛րը կը մըտնի՛.
 Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
 Ի՞նչ ես կորցըրել չես կարում գըտնել.
 Աղջի, հէ՛յ Անուչ, ա՛յ աղջի՛, Անո՛ւչ...
 Ծընկանը զարկում, հառաչում է «վո՛ւչ»...
 Ու ձորի գըլխին մոլորած կանգնած
 Նայում է ներքեւ սիրտը սեւակնած:

Ամպերն եկել են, սարերը պատել,
 Ձորերը լըցել, իրար փաթաթել,
 Հազար շար ու շառ, հազար հարամի,
 Հազար ջահելներ վըխտում են հիմի:

VIII

— Թո՛ղ, կանչում են ինձ... մայրս կիմանայ...
 — Չէ՛, Անո՛ւշ, քի՛չ էլ, մի քիչ էլ մընա...
 — Չէ՛, թող ես գընամ. ա՛խ, ի՛նչ խենթ եմ լես,
 Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պէս,
 Հէնց ես եմ մենակ լալիս ու տանջում,
 Դու սարի լանջին խաղեր ես կանչում:

Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...
 Ես ե՛րբ եմ եկել այստեղ քարացել
 Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ անիրա՛ւ,
 Էնքան մընացի՛ աչքըս ջուր դառաւ:

Ասում են՝ ուռին՝
 Աղջիկ էր ինձ պէս,
 Մընում էր եարին,
 Ու չեկաւ նա տես.
 Խեղճը դողալով՝
 Անյոյս կըռացաւ,
 Թարթիչ չորացաւ,
 Ուռենի դարձաւ.
 Ջրերի վըրայ
 Գըլուխը կախած՝
 Դեռ դողում է նա
 Ու լալիս կամաց,
 Ու ամբողջ տարին
 Մի միտք է անում,
 Թէ եարը եարին
 Ո՛նց է մոռանում...

— Ա՛խ, Անուշ, Անո՛ւշ, էդ ի՞նչ ես ասում.
 Իա դու չն՞ս լըսում,
 Էն՝ որ լանջերին խաղեր եմ ասում,
 Ո՞ւմ հետ եմ խօսում,
 Էն՝ որ գիշերով չընու եմ փըչում,
 Էն ո՞ւմ եմ կանչում.
 Էն, որ մոլորեամ, նըստած եմ մընում,
 Ո՞ւմ հետ եմ լինում.
 Էն, որ հառաչում ու ախ եմ քաշում,
 Էն ո՞ւմ եմ յիշում...
 Ա՛խ, Անո՛ւշ, Անո՛ւշ, անասուեա՛ծ Անուշ...
 Արբեցած, Անուշ,
 Հառաչեց հողիւն ու սըրտին ընկաւ,
 Հալւեցաւ, հազաւ...

IX

— Անո՛ւշ. ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տո՛ւն արի,
 կանչում է մայրը, հառաչում, կանչում:
 — Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛,
 Ձորից աղջըկայ ձայնն է ղողանջում:
 Ու մազերն անկարգ տըւած թիկունքով
 Ու ցըրեամ շիկնած այտերի վըրան:
 Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից
 Անուշը՝ փախած եղնիկի նըման:
 Նա կուժը դատարկ ետ բերաւ կրկին,
 Իսկ ուսին տարած ուսաչոր չըկայ,
 Թողել է այն էլ ջըրի եղերքին:
 Ա՛խ, անհոգութիւն ջահել աղջըկայ...
 — Նանի՛, վախեցայ, գանգատուում է նա,
 Եւ ուղում է լալ, չի կարողանում.
 Նանի՛, ներքեւում ես մարդիկ տեսայ,
 Կարծեցի՛ թուրքեր էին լողանում...

Անիծում է ձեր մայրը բարկացած
Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,
Ու անէծք տալով իջնում է նա ցած՝
Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ե Ր Գ

X

(Համբարձման առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալւան
Զուգել են հանգեր նախշուն գորգերով,
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

«Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա
Սեւ սարեր եայլա,
Եայլա ջան, եայլա:

Երգ ու բոյր խառնած,
Թեւ-թեւի բրնձած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա.
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Եկաւ Համբարձում,
Ծաղկով դարգարած,
Մեր բաղդին հարցում:
— Ո՞վ է մեզ գըրւած:

Ա՛յ ջան տըղայ, չորան տըղայ, ո՞ւմն ես դու.
Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Հուր սըրտեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Թընդում են երգեր, խնդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ելնում է մէկին իր երազն ու սէր,
Միւսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պըտոյտ է տալի վիճակը նորից,
Քուշուշքը գըլխին ծաղիկ ծաղկամէր,
Թընդում «ջան գիւլում» մատաղ սըրտերից,
Հետը գըրգըւում էն ծաղկոտ սարեր:
Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլա զիպչի
Քեզ սիրի ով որ աղջիկ:
Ո՛հ, ինչ սեւ վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սեւաբա՛խտ քուրիկ, նազիլի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորւած, ապուշ:

— Սուտ բան է, քոյրի՛կ, դու մի՛ հաւատար,
 Լոկ պատահական մի չար խօսք է սա:
 Սիրտըդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
 Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա՛:

— Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ,
 Ես երբե՛ք, երբե՛ք բախտ չեմ ունեցել.
 Ես միշտ էլ էսպէս անբախտ կը լինեմ,
 Մանուկ օրից են դեռ ինձ անիծել:
 Ասում են՝ մի օր, ես օրօրոցում՝
 Մի պառաւ դաւրիչ մեր դուռն է գալի,
 Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
 Իմ նանը նըրան բաժին չի տալի:
 — Կորի՛ ասում է, կորի՛ մեր դըռնից,
 Երեխաս ճաքեց, հեռացի՛ր գընա՛...»
 Ու դաւրիչն այնտեղ անիծում է ինձ,
 Թէ՛ դըրս օրը լացով անց կենայ...
 Ա՛խ, այն դաւրիչի անէծքին անդուժ՝
 Ու այս վիճակին տեղեակ է Աստուծ,
 Սիրտըս էլ միշտ փա՛կ, սիրտըս էլ միշտ մո՛ւլթ,
 Ի՞նչ կայ, չը գիտեմ, իմ առջեւ պահւած...
 — Մի՛ արբամիր, Անո՛ւշ, մի՛ լինիր յամառ.
 Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
 Մի խելառ դաւրիչ, մի անէծք յիմար,
 Ու լալիս ես դու այդպէս սըրտաճա՛ք...
 Հանգի՛ստ կաց քոյրի՛կ, մի՛ վախիր այդքան,
 Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
 Այդ քո նորահաս մատաղ կուսուլթեան
 Առաջեւ դեռ կան երջանիկ օրեր:
 Սուտ բան է քոյրի՛կ, դու մի՛ հաւատար,
 Լոկ պատահական մի չար խօսք է սա.
 Սիրտըդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
 Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա՛:

(խումբը երգում է)

Աղջի բախտաւո՛ր,
 Երնէ՛կ քու սէրին,
 Քու սարի սովոր
 Սեւ-սեւ աչքերին:
 Համբարձում եա՛յլա,
 Եայլա ջան, եա՛յլա,
 Սէր-օրեր եա՛յլա,
 Եայլա ջան, եա՛յլա:
 Մեռնեմ գարունքիդ,
 Ծաղկած գարուն ես,
 Սարի պէս մէջքիդ
 Կանգնած եար ունես:
 Համբարձում, եա՛յլա,
 Եայլա ջան, եա՛յլա,
 Սար-եարեր, եա՛յլա
 Եայլա ջան, եա՛յլա:

Ե Ր Ր Ո Ր Գ Ե Ր Գ

XII

Ձըմբան մի գիշեր կար մի հարսանիք,
 Հըրճում էր անզուսպ ամբոխը գիւղի.
 Գիւղն էին իջել հովիւ պատանիք
 Աղջիկ տեանելու, պարի ու կոխի:
 Ու պարից յետոյ լայն հրապարակ
 Բաց արին մէջ տեղն արձակ գըլխատան,
 Ձուռնաջին փըչեց կոխի եղանակ,
 Ահել ու ջահել իրարով անցան:

Հարա՛յ են տալի — «քաշի՛ հա, քաշի՛...»
 Ու դուրս քաշեցին զոտով երկուսին.
 Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
 Անդրանիկ եղբայր գառնարած Մօսին:
 Ողջ գիւղը կանգնեց պարըսպի նըման.
 Զոկեց, բաժանեց երկու բանակի,
 Ամեն մի բանակն ընտրեց փահլեւան,
 Կանգնեց թիկունքին տըղերանց մէկի:
 Գոռում են, գոչում երկու բանակից.
 — Սըրտապինդ կացէ՛ք, մի վախէ՛ք, տըղերք,
 Իսկ նորեկ հարսի բարտի քամակից
 Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:
 Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
 Փէչերը հաւաք խըրում են գօտին,
 Գետին են դարկում ձեռքերը հաստիկ,
 Իրար են հասնում թափով մուկպին...
 Աղաթ կայ սակայն է՛ն մութ ձորերում,
 Ու միշտ հընազանդ հընոց աղաթին,
 Ամբոխի առջև իգիթն իր օրում
 Գետին չի գարկիլ ընկեր իգիթին:
 Ու իրար բըռնած Սարօն ու Մօսին
 Քաշում են, ընկնում խոզապարկուկի.
 Ընկնում են գետին, ելնում միասին,
 Դըժւար է իբրև յաղթել մէկ մէկի:
 Իզուր է գոռում ամբոխը հարբած,
 Զուր սըրտատըրօի նայում աղջիկներ,
 Եւ զուր է Անուշն, իր շունչը կըտարած,
 Սառել ու կանգնել, ինչպէս մի պատկեր:
 Անուշը կանգնա՛ծ... Սարօն նըկատեց,
 Թունդ առաւ սիրտը ու զարկեց արագ.
 Աչքերի առջև մըլարը պատեց.
 Մոռացաւ ընկեր, աղաթ ու աշխարք:

Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
 Կատակի տալով թողած էր իրեն,
 Ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
 Գետնեց ընկերին ու չոքեց վըրէն:
 Ամբոխը թափեց հարաւ—հըրոցով,
 Վեր թըոցրեց ջահել փահլեւաններին
 Եւ ուրախութեան աղմուկ—գոռոցով
 Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:
 Յընծութեան ձայնից, ծափերի զարկից
 Շարժում են դողում պատեր ու օճորք.
 Իսկ նորեկ հարսի բարտի քամակից
 Նայում են կանգնած հարսն ու աղջկերք:

XIII

Վերկացաւ Մօսին, իրեն կըտրատում,
 — Թող գա՛յ, գոռում է, ու բըռնենք նորից,
 Թէ չէ նամարդը, արևս եմ երդում,
 Էլ չի պըրծնելու երբեք իմ ձեռից.
 Վէ՛ր չի գցել ինձ... ինձ խաբել է նա...
 Մէյրան բաց արէք, թող մին էլ մէջ գայ...
 Ու ամէն կողմից ուրախ հըրհըռում,
 Թունալի ծաղրով կանչում, են գոռում.

— Չէլա՛ւ, էդ չէլաւ,
 Վեր չի գըցել դեռ,
 Մօսին թօլ էլաւ —
 Խոզապարկուկ էր...
 Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
 Շատ էլ լաւ կանի,
 Մէջքը թա՛փ տըւէք,
 Թող մին էլ բըռնի.
 Հա՛, հա՛, հա՛, տըղե՛րք,
 Մէջքը թա՛փ տըւէք...

70910-24



XIV

Եւ աղմբկալի հարսանքի տանից
 Դուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
 Արիւն է կաթում սեւակնած սըրտից,
 Գընում է ըշտապ, քայլերը մոլոր:
 — Ամօ՛թ քեզ, Մօսի՛, թո՛ւք ու նախատինք,
 Ամօ՛թ քեզ նըման գոված իգիթին,
 Մի անունդ յիշիր, մի բոյիդ մըտիկ.
 Դեռ քու թիկունքը չէր տեսել դետին:
 Ի՛նչպէս վէր ընկար դո՛ւ սարի նըման,
 Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...
 Դո՛ւ... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
 Նըրանից յետոյ երեւաս կանա՛նց...
 Եկա՛ծ էր էս բանն իսկի քու զըլխին...
 Ծաղրադեղ դառար բովանդակ գեղին...
 Դէ՛ մեռիր էլի՛, գետինը մըտիր,
 Տանը վեր ընկի՛ր իլիկ պըտըտիր»...

XV

— Վա՛յ, վա՛յ, Մօ՛սի ջան, ինձ մի՛ սպանիր.
 Սըրանից յետոյ չե՛մ սիրել նըրան...
 Վախենում եմ ես... դամէդ տեղը զիր...
 Սիրտըս դողում է տերեւի նըման...»

Խընդրում էր լալով եղբօր առաջին
 Անդօր ու դալուկ իր քոյրը չոքած,
 Մօսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
 Ուզում էր մորթել նըրան աչքը բաց:
 — Դէ՛ իմ անունով երդւիր, անըզգամ,
 Որ էլ Սարօին դու չես սիրելու,

Թէ չէ՛ տեսնո՞ւմ ես խանչալը հանած՝
 Մինչեւ դաստակը սիրտդ եմ խրելու:
 Քու ոտի հողն եմ, Մօսի՛ ջան, Մօսի՛,
 Դու քու եսիրին երգո՞ւմ ես տալիս...
 Ես էլ Սարօին չեմ սիրում ասի,
 Վեսնո՞ւմ ես չոքած ի՛նչպէս եմ լալիս...

— Դու խաբո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ, խաբեքա՛յ.
 Չե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
 էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մտնում՝
 Հեկեկում ես դու գիշերուայ մըթնում.
 էն ի՞նչ է հապա, որ դու երազում
 «Սարօ ջան, Սա՛ր, Սարօ» ես ասում...
 — Մօսի ջան, Մօ՛սի, գլխովդ չուռ գամ.
 Ինձ մի՛ սպանիր, ինձ թող էս անգամ.
 էլ չեմ սիրել ես, երբ դու չես ուզում,
 էլ չեմ կանչել ես նըրան երազում...
 Ինձ մի՛ սպանիր, դամէդ տար հեռու...
 Քու քո՞յրը չեմ ես... իմ Մօսին չես գո՛ւ...»

XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
 Ախպէր տըղերքը էս դէպքի համար.
 Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
 կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
 Անկոտորում Մօսին էլ ո՛ր Մօսին էր,
 Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
 Իրեն հարադատ քըրոջը տեսնէր
 Նամարդ ընկերի-Սարօի գըրկում:
 Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
 Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
 Սարօի անունն ու սէրը թաքուն

Խանչալի ծայրով սըրտիցը հանի,
 Ո՞վ գիտի՝ գուցէ հէնց այս գիշեր էլ
 Իգիթ ոսոխներն, անհաշտ ու յամառ,
 Մէկմէկու հօտից ոչխար են քըչել,
 Մէկմէկից վըրէժ առնելու համար:
 Կարող է նոյնպէս պատահել յանկարծ,
 Որ մէկի դէզը, արդիւնքը հընձի,
 Գիշերւայ ժամին, հըրով բըռընկած,
 Երկնահաս բոցով աստղերը խանձի:

Չ Ո Ր Ր Ո Ր Գ Ե Ր Գ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
 Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
 Քարոտ թիկունքից Չաթինդաղ լերան
 Նոր է արեւը պրոռնքը հանում.
 Գիւղում աղմուկով իրար են անցնում,
 Կըտեր ծայրերին կանայք հաւաքւած,
 Տըղերքը դէպի քարափն են վազում
 Հըրացանները կիսերից բըռնած:

XVIII

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
 Կանգնեց վըրդովւած տըղերանց միջին,
 Մատը դէպի ձոր մեկնելով հանդարտ
 Այսպէս նա պատմեց զօռ տալով չիբխին.
 — Էս գիշեր կէսը կըլնէր գիշերւայ,
 Դեռ չէի կըպցրել աչքըս տեղի մէջ.
 Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղւայ,
 Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...

Հա՛, հալալ կէսը կըլնէր գիշերւայ,
 Ծունը վերկացաւ էս կըռան վրայ.
 Հէ՛յ հէ՛յ կանչեցի, ձէն տըւող չէլաւ,
 Ծունը գազազեց, շունը վեր կալաւ...
 Հէ՛յ գիտի, ասի ինքս իմ միջում,
 Ի՛նչ է մընացել առաջւան տըղից.
 Քընում էի վաղ մենակ արխաջում,
 Մի ձէն լըսելիս վեր թըռչում տեղից...
 Էն էի ասում, քընել չէի դեռ.
 Կը լինէր դառը գիշերւան կէսը,
 Երկու մարդկային սև կերպարանքներ
 Ծան առջեւ փախած՝ ցած իջան դէսը...
 Էս որ լըսեցին, դէս ու դէն ցըրւած
 Տըղերքը ձեպով ձորը ներս մըտան,
 Ու մըտի տակին, ճամբիցը ծըռւած,
 Երկու մարդու թարմ առնատեղ գըտան:

XIX

Ամբողջ մի ամիս խումբը գինավառ
 Սարեր ու ձորեր ոտնատակ տըւեց,
 Չորան Սարօին գըտնելու համար,
 Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
 Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
 Գովելով նըրա արարքը ճարպիկ.
 — Հալալ է տըղին, ա՛յ իգիթութիւն.
 Ահա՛ թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ:
 Մինակ Անուշի եղբայրը — Մօսին
 Մընաց հանդերում. երգում կերաւ նա,
 Ուր որ էլ լինին՝ նըրանց միասին
 Գըտնի՝ կոտորի, սիրտը հովանայ:

XX

— Աղջի՛, վա՛րդիչաղ, թէ հոգիդ սիրես,
 Մի, գարիդ գըցիր, տես ի՛նչ է ասում.
 Աչքըս խաւարի, տեսիլք դառնում ես, —
 Տեսիլք եմ տեսել գիշերս երազում:
 Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
 Անբախտ Սարօի ոչխարը կանգնած,
 Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
 Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տըւած...
 Մի գարիդ գըցի՛ր, թէ սրտով խընդաս,
 էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
 Ողորմած Աստուած, քու դուռը բանաս,
 Քու ոտի հողն ենք — Դու ես ըստեղծել...
 Անբան գառները մութ ձորի միջին
 Խաղ էին կանչում ու ձէնով լալի,
 Սարօի նանն էլ նըրանց առաջին
 Աղլուխ էր առել ու պար էր գալի...
 — Աղջի՛, Մանիչակ, վատ բան ես տեսել,
 Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
 էս չարն, էս բարին... Սարօն է էս էլ.
 Տես, ահա, Սարօն սև ճամբէն ընկաւ...
 Աստուած խընայի Չահել-Չիւանին,
 Աստուած խընայի իր նաչար նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
 Սարօն փախցրած եղջերւի նըման,
 Օրհասն առաջին, գընդակն ետեւից,
 Հանդերը դըժոխք, ընկերը դուշման:
 Եւ երբ երեկոն հանդարտիկ լու լուս
 Սարերից իջնում, խաւարն է պատում,
 Նրա բայաթին ողբում է տըխուր,
 Ընկեր սարերին խօսում, գանգատում:

«Բարձր սարեր, ա՛յ սարե՛ր,
 Ձէն եմ տալի «վա՛յ», սարե՛ր,
 Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք.
 Իմ դարդերի թայ սարե՛ր:

Որս եմ՝ բուծէս ձեզ արած,
 Ձեր ձորերին, ձեզ արած,
 Կուգեմ կորչեմ անգիւման,
 էս աչխարքից բէզարած:

Կորչեմ բէզար դատարկուն,
 Քար սարէ-սար դատարկուն,
 Ս՛եռնեմ պըրծնեմ էս օրից,
 Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ կը մեռնեմ՝ ամա նա
 վա՛յ թէ յանկարծ իմանայ,
 Ես ազատեմ էս ցաւից,
 Աչքը լալով նա մընայ:

Հ Ի Ն Ք Ե Ր Ո Ր Դ Ե Ր Ք

XXVII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
 Կանգնած են շուրջը կանայք հարեւան,
 Ու խօսք չեն գրտնում սսեն անարգւած,
 Տարած-ետ բերած, անբախտ աղջըկան:
 Աստուած խընայեց՝ կոպիտ եղբայրը
 Հեռու հանգերից դեռ տուն չէր դարձել,
 Իսկ խոտոռաղէմ, ալեւոր հայրը
 Սկսաւ փըրփըրած թրքել, անիծել:
 — Դո՛ւրս գընա՛, կորի՛, ա՛յ լիբբ: անըզգա՛մ,
 Սեւ ու սուգ լինի թագ ու պըսակըդ,
 Կորի՛, չերեւաս աչքիս միւս անգամ,
 Գիտի՛նը մըտնի երկար հասակըդ:
 Տեսա՛ր որ, նըրան ատում է Մօսին,
 Չեն ուզում տեսար, նըրան հէրն ու մէրդ,
 Դու քանի՞ գըլուխ ունիս քո ուսին,
 Որ վեր ես կենում փախչում նըրա հետ»:
 Խոնըւած գիւղացիք կըտուրից իջան
 Մեղմելու կոպիտ բարկութիւնը հօր,
 Յայտնըւեց նոյնպէս գիւղի քահանան,
 Մի պատկառելի հըսկայ ալեւոր:
 — Դո՛ւրս գընացէք, գո՛ւրս, գոչեց տէրաէրբ,
 Անուշը թողէք ուղիղն ինք սսի,
 Թողէք նա յայտնի իր միաքն ու սէրը,
 Նըրանից յիտոյ բանը կը պարզի:
 Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,
 Սիրո՛ւմ ես նըրան, քու կամքո՞վ փախար...
 Եթէ սիրում ես՝ էլ զարդ մի՛ անիր,
 պիտի պըսակեմ ես քեզ անպատճառ...

— Ի՛նչ են հառաչում... էն ո՞վ էր, մի տե՛ս,
 Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
 Ո՞վ է ըսպանել... Մօսի՞ն... ո՛ւմ... ո՛ւր...
 — Անո՛ւշ, հէ՛յ Անո՛ւշ... Չուր հասցըրէ՛ք, Չո՛ւր...»

XXIII

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
 Երկընքի մըթնած ամպերից իջնէր.
 Ինչպէս փոթորիկ սաստիկ սըընթաց,
 Գիւղից սըլացան մի խումբ կըտըրիճներ,
 Ցաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
 Թըռչում են, սսես ահից հալածւած,
 Ու նըրանց առջև ահռելի բացւում,
 Թըլչում է ձորը արիւնոով լըցւած:
 Գիւղը դատարկեւց մի ակնթարթում,
 Քարափի գըլխին կանգնած անհամբեր,
 Լո՛ւռ, սըրտատրոփ ականջ են զընում,
 Նայում են ներքեւ... ձայն չի գալի դեռ...
 Դեբեդն է միայն անդընդում՝ յուզւած՝
 Խըլածայն ողբով սուրում դէպի ցած:

XXIV

Ու մարդասպանը դուրս եկաւ ձորից,
 Դէմքը այլայլած, քայլւածքը մոլոր.
 Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
 Եւ կերպարանքը փոխւած է բոլոր:
 Առանց նայելու մարդկանց երեսին,
 Առանց խօսելու, սեւակնած, դւժան,
 Մօտեցաւ սրահին, կախ տըւաւ սընին
 Սեւ հըրացանը, սեւ օձի նըման:

Պապանձեց նոյնպէս ամբոխը մեխւած,
 Ոչ ոք ծըպըտալ չի համարձակուում,
 Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝
 Հարա՛յ է կանչում, երեսը պոկում:
 Մեռած չորանի պառաւ նանն է նա՝
 Ցաւից խելագար բառաչում, լալիս.
 Տարաբա՛խտ ծընող, վաղում է ահա,
 Զորիցն է տըխուր գոռոցը գալիս:

XXV

Ագաւոր կանայք նորա ետեւից
 Հարա՛յ կանչելով ձորը վազեցին,
 Իրենց կորցրածն էլ յիշելով նորից՝
 Դիակի շուրջը կարգով շարեցին:
 Իգիթին վայել սըրտառուչ ողբով
 Լաց ու կոծ արին ձէն ձէնի տըւած,
 Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխիկոր,
 Մընացին մօտիկ քարերին նըստած:
 Ողբացին անշունչ դիակի վըրա
 Անտէր մընացած ոչխար մասին.
 Անտիրտ անէծքով յիշեցին վըրա
 Անճար մընացած խեղճ եարի մասին.
 Եւ նըրա մասին, որ ընկերները
 Հանդեր գընալիս Սարօ կը կանչեն,
 Որ սարից փախած սոված չընկեր
 Կըտերը պիտի ոռնան, կըլանչեն:
 Որ հով սարերի սովորած նանը
 Էլ սար չի գընալ առանց Սարօի,
 Սեւ չորեր հագած կը նըստի տանը՝
 Անցած օրերը միտը կը բերի.
 Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
 Կըտրատուում էին սիրտը ծեր նանի,

Եւ աղաչում է նա մեռած որդուն
 Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
 — Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,
 Իմ օր ու արեւ, կեանք ու ջան՝ որդի,
 Դու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
 Թչնամի՛ որդի, դաւածա՛ն որդի»...
 Բայց չէին բացւում աչքերը փակւած,
 Շուրթերը սառել, չորացել էին,
 Նըրանց արարքից ատամները բաց,
 Սիպտակ շարքերով երեւում էին:
 Եւ նա կատաղած՝ յանդուգն անէծքով
 Ծառս եղաւ դուշման երկընքի դիմաց,
 Եւ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
 Եւ լալիս էին ձէն ձէնի տըւած...
 Գիշերը իջաւ, սաստկացաւ մութը
 Եւ նուաղեցին ձայները տըրտում,
 Յոգնեցին, հանգա՛ն... Մերուկ Դեբեդը
 Սըզում էր մենակ խաւար անդընդում:

XXVI

Եւ մի քանի ընկեր տըղերք
 Զորում, գետի եզերքին,
 Փոս փորեցին ու սըրտաբեկ
 Հողին տըւին հովւի դին:
 Ծառ ու ծաղիկ սըւսըւալով
 Բոյր խընկեցին դիւրեկան,
 Ծեր Դեւ-բեղն էլ անեղ ձայնով
 Երգեց վըսեմ շարական:
 Ու տըղերքը տըխուր ու լուռ
 Վերադարձան գէպի տուն,
 Զորում թողած մի սեւ բըլուր,
 Մի գերեզման անանուն:

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ Ե Ր Գ

XXVII

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
 Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան,
 Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղւոր,
 Գետի եզերքին շըրջում է մոլոր,
 Շըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
 Երգեր է ասում ու ման է գալիս:

— Սիրուն աղջի՛ն, ի՛նչ ես լալիս
 էդպէս մենակ ու մոլոր,
 Ի՛նչ ես լալիս ու ման գալիս
 էս ձորերում ամեն օր:
 Թէ լալիս ես՝ վարդ ես ուղում՝
 Մայիս կը գայ, մի քիչ կայ,
 Թէ լալիս ես՝ եարդ ես ուղում՝
 Ա՛խ նա գընա՛ց, նա գընա՛ց...
 Արտասուելով, լալով էդպէս
 Ետ չես դարձնի էլ գերիդ,
 Ինչո՞ւ իզուր հանգընում ես
 Զահել կրակն աչքերիդ:
 Նըրա անբախտ հողի վըրա
 Պաղ ջուր ածա աղբիւրի,
 Դու էլ գընա նոր սէր արա,
 Էսպէս է կարգն աշխարհի:

— Շնորհակալ եմ, անցոր ախպէր,
 Աստուած պահի քու ետրին.
 Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
 Անուշ ծիծաղն աչքերին...

Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
 Վայելեցէք անթառամ:

Ինձ արցունք է տըւել Տէրը,
 Ես պիտի լամ, պիտի լամ...

Ու ման է գալիս

Երգում ու լալիս:

Երգերը անկապ, երգերը տըխուր,
 Արցունքի նման հոսում են իզուր.
 Բայց լալիս է նա ու երգեր ասում,
 Ու միշտ այն անմիտ տրտունջն է խօսում,
 Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխեց,
 Ինչպէս դատարկեց կեանքում ամեն բան.
 Սարերը մնացին որբ ու անչորբան,
 Թէ ինչպէս յանկարծ նա գընաց հեռու,
 Էլ չի դառնալու՛ւ, էլ չի դառնալու՛ւ...

«Ետ դա՛ռ, ե՛տ, իգի՛թ,
 Ետ դառ, անիրա՛ւ,
 Կարօտած եարիդ
 Աչքը ջուր դառաւ:
 Ոչխարդ էն սարով
 Շուռ տուր, տուն արի՛,
 Փախի՛ր գիշերով
 Ու թագուն արի...»

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
 Ո՞վ է քընած էն տըղէն,
 Վըրէն քաշած սեւ ետիընչին,
 Կուռը հանած էն տըղէն...
 Զա՛ն, իմ ետըն է, ջանի՛ն մեռնեմ,
 Ծաղկի հոտով նա հարբել,
 Սարի լանջին, հովի միջին
 Մուշ-մո՛ւշ, անուշ մըրսփեկ:

Վե՛ր կաց, վեր, իգի՛թ,
 Վե՛ր կաց, անիրա՛ւ,
 Ոչխարըդ բեր կիթ,
 Օրը ճաշ դառաւ...
 Արի՛, ջա՛ն, արի՛,
 Քու գալուն մեռնեմ,
 Թուխ չոբան, արի՛,
 Կարօտըս առնեմ...

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու գուռնով
 Ի՞նչ հարսանիք է դու րս գալի,
 Մարդիկ ուրախ թօն ու ձիւնով
 Ձի են խաղում, չափ տալի...
 Աղջի, աղջի՛, մըտիկ արէք,
 Էս ի՞նչ տեսիլք ես տեսայ.
 Ո՛վ էր տեսել էսպէս հարսանիք —
 Ո՛չ հարս ունեն, ոչ փեսայ...

Բերում են հըրէ՛ն,
 Ամա՛ն, մեր տան դէմ
 Վե՛ր դըրէք, վըրէն
 Հիւսերըս քանդեմ...
 Ես էլ եմ գալի՛ս,
 Էդ ո՛ւր էք տանում...
 Ինձ էլ թաղեցէք
 Իր գերեզմանում...

Ա՛խ, չէ՛, ամա՛ն, ասում են դա
 Մի դիակ է լո՛ւռ, հոտա՛ծ,
 Արիւնը չոր դէմքի վըրա,
 Աչքերն անթա՛րթ, սիպտակած:
 Նա սիրում էր անուշահոտ,
 Աչքերը լի ծիծաղով,

Նա գալիս էր ցողոտ-չաղոտ,
 Հանաքնեքով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
 Արի՛, անիրա՛ւ,
 Կարօտած եարիդ
 Աչքը ջուր դառաւ:
 Էլ մի՛ ուշացնի,
 Ես չատ եմ կացել,
 Էլ մի՛ լայացնի,
 Ես չատ եմ լացել.
 Տե՛ս կը խըռովե՛մ,
 Լաց կըլեմ ես է՛լ.
 Ձեմ խօսիլ քեզ հե՛տ...
 Ձեմ սիրել քեզ է՛լ...»

XXVIII

Անլըռելի վըշվըշում է
 Պըղտոր ջուրը Դերեղի,
 Նըրա ափին կանաչում է
 Մենակ շիրիմն իգիթի:
 Նըրա շուրջը հէք սիրուհին
 Թընդացնում էր ողբ ու լաց,
 Ձայն է տալիս իր Սարօին
 Ու պըտըտում մոլորած:
 Եւ հոսում է գիշեր-ցերեկ
 Արցունքն անբախտ աղջըկայ,
 Բայց իր սիրած տըղան երբեք
 Չըկա՛յ, չըկա՛յ ու չըկայ...

Վըշվըշում է գետը — վո՛ւշ, վո՛ւշ,
 Ու յորձանք է տալիս յորդ,
 Ու կանչում է՝ «Արի՛, Անո՛ւշ,
 Արի՛, տանեմ եարիդ մօտ...»

Անո՛ւշ, ա՛յ աղջի՛, Անո՛ւշ, տուն արի...
 Կանչում է մայրը վերեւից, կանչո՛ւմ:
 Լուռ են ձորերը, լուռ են անտեղի,
 Գուշման Դեբեդն է պղտոր մըռնչում:

Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ,
 Վո՛ւշ, քու սէրին, քու եարին,
 Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ,
 Վո՛ւշ - քու սիրած սարերին...

XXIX

Համբարձման գիշեր, էն դիւթիչ գիշեր,
 Կայ հըրաչալի, երջանիկ վայրկեան.
 Բացում են ոսկի երկընքի զըռներ,
 Ներքեւ պապանձում, լըռում ամեն բան,
 Եւ Աստուածային անհաս խորհըրդով
 Լըցում բովանդակ Նըրա սուրբ գըթով:

Այն վեհ վայրկեանին չըքնաղ գիշերի՛
 Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից,
 Անմուրաղ մեռած սիրահարների
 Աստղերը թըռած իրար են գալիս,
 Գալիս՝ կարօտով մի հեղ համբուրում
 Աչխարքից հեռո՛ւ, լազուր կամարում:



ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՍԸ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

Հէ՛յ պարոններ, ականջ արէք
 Թափառական աշուղին,
 Սիրուն տիկնայք, ջահել տըղերք,
 Հաւ ուշ զըրէք իմ խաղին:

Մենք ամենքըս հիւր ենք կեանքում
 Մեր ծնընդեան փուչ օրից,
 Հերթով գալիս անց ենք կենում
 էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խընդում,
 Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
 Մահը մերն է, մենք մահինը,
 Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լա՛ւ իմացէք,
 Որ խօսուում է դարէ դար,
 Երնէ՛կ նըրան, որ իր գործով
 Կ'ապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
 Անէ՛ծք նըրա չար գործքին,
 Որդիդ լինի թէ հէրն ու մէր,
 Թէ մուրազով սիրած կին:

Ես լաւութեան խօսքն եմ ասում,
 Որ ժըպտում է մեր սըրտին.
 Ո՞վ չի սիրում, թէկուզ դուշման:
 Լաւ արարքը, լաւ մարդին:

Է՛յ, լաւ կենաք, ականջ արէք,
 Մի բան պատմեմ հիմի ձեզ,
 Խօսքըս, տեսէք, ուր է գնում,
 Քաջ որսկանի գիւլի պէս:



I

Նաղիր Շահը զօրք հաւաքեց,
 Չօրք հաւաքեց անհամար,
 Եկաւ Թըմկայ բերդը պատեց,
 Ինչպէս գիշերն էն խաւար:

— Հէ՛յ. քաջ Թաթուլ, կանչեց Շահը,
 Անմահ էիր քեզ կարծում.
 Ե՛կ, բերել եմ ես քու մահը,
 Ի՛նչ ես թառել ամրոցում:

— Մի՛ պարծենայ, գոռոզ Նաղիր,
 Պատասխանեց էն հըսկան.
 Գըլխովը շա՛տ ամպեր կանցնեն,
 Սարը միշտ կայ անսասան:

Ասաւ, կանչեց իր քաջերին,
 Թուրը կապեց հաւլունի,
 Թըռաւ, հեծաւ նըժոյգ իր ձին,
 Իաշտը իջաւ արիւնի:

Ու քառսուն օր քառսուն գիշեր
 Կըռիւ տըւին անդադար,
 Ընկան քաջեր, անթիւ քաջեր,
 Բերդի գըլխին հաւասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
 Թաթուլն անյայթ, աննըկուն.
 Զօրք ու բարան խորտակել են,
 Նըրա բերդը միշտ կանգուն:
 Ու միշտ ուրախ, յաղթանակով:
 Իր ամրոցն է դռնունմ նա.
 Սպասում է էնտեղ կինը,
 Ջահել կինը սեւաչեայ:

II

Էն տեսակ կին,
 Ես իմ հոգին,
 Թէ աշուղն էլ ունենար,
 Առանց զէնքի,
 Առանց զօրքի
 Շահերի դէմ կը դընար:
 Սիրոյ հընոց
 Կրակ ու բոց
 Էնպէս աչքեր թէ ժըպտան,
 Մարդու համար
 Օրւայ պէս վառ
 Գիչերնները լոյս կը տան:

Վարդի թերթեր
 Էնպէս շուրթեր
 Թէ յաղթուեթիւն քեզ մաղթեն,
 Էլ քեզ ո՛չ Շահ
 Ո՛չ ահ ու մահ,
 Ոչ զէնք ու զօրք կը յաղթեն:

III

Ու կըռւի դաշտում Շահի առաջին
 Արին մի անգամ գովքը սիրունի.
 Նըրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
 Չի հասնի չըքնազ հուրին Իրանի:
 Ծով են աչքերը Ջաւախքի դըստեր
 Ու կորչում է մարդ նըրա հայեացքում,
 Ճակատը ճերմակ էն ձիւնից էլ դեռ,
 Որ բարձր Աբուլի գագաթն է ծածկում:
 Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,
 Նըրա սիրովը է հարբած էն հըսկան,
 Նըրա ժպտան է քաջին ուժ տալի,
 Որ դաշտն է իջնում առիւծի նըման:
 Թէ տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,
 Թաթուլն էլ անգոր կընկնի ոտիդ տակ,
 Հանգիստ կը տիրես և Թըմուկ բերդին,
 Որ չես կարենում էսքան ժամանակ:

IV

Էնպէս է ասել հընուց էտ մասին
 Փարսի բիւբիւլը, անմահ Ծիրգուսին.
 Ի՛նչը կը յաղթի կեանքում հերոսին,
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

Արևի նըման ճակատը պայծառ,
 Նայում է խըրոխտ, կանգնած ինչպէս սար.
 Ո՛վ կանի նըրան գետնին հաւասար,
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

Պարում է ասես կըռլու գընալիս,
 Գետընքից վերև, թըռչում, ման գալիս.
 Ո՛վ ցած կը բերի նըրան թըռչելիս,
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

Թէկուղ և արար աշխարհ գայ վըրան,
 Կերթայ դէմ ու դէմ, տուր չի տալ իրան.
 Ռուսաէմ Զալն էլ չի յաղթել նըրան.
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

V

Ու զըրկեց Շահը իր թովիչ երգչին.
 Գընա տե՛ս, ըսաւ, թըմկայ տիրուհուն,
 Երգի իմ սէրը նըրա առաջին,
 Պատմի՛ իմ փառքը ու գանձը անհուն:
 Խոստացի նրան իմ ոսկի գահը,
 Խոստացի նրան ամե՛ն, ամեն բան.
 Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
 Երկրակալ Շահը՝ իր սիրած կընկան:

Ուր անեղ կըռուով չի մտնիլ արքան,
 Ղոնաղ է աշուղն իրեն սագի հետ.
 Եւ անա՛ մի օր ծեր, թափառական
 Մի աղքատ աշուղ մըտաւ թմկաբերդ:

VI

Գոռում են, դողում թըմկայ ձորերը,
 Կանգնած է թաթուլ Շահի հանդիման.
 Զարկում են, զարկում դուշման զօրքերը,
 Արիւնը հոսում էն Բըռի նման:

Զարկում են, զարկում դուշման զօրքերը,
 Արիւնը հոսում էն Բըռի նման.
 Երգում է աշուղն իր Շահի սէրը,
 Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ թըմկայ տիրուհին.
 Եւ վըրդովում են իր միտքը թագուն
 Դաւաճան գործի ամօթը խորին
 Եւ արքայական փառքն ու մեծութիւն...

Լըսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
 Ա՛յ նազանի աննըման.
 Նայի Շահի՛ն, իրեն զօրքի՛ն,
 Աշխարքի տէրն անսահման...

Մեզ պէս տըկար մարդ է նա էլ
 Սիրուններին միշտ գերի.
 Գու ճակատին թագ է վայել,
 Լինիս չըքե՛ղ թագուհի...

Լըսում է չքնաղ Թըմկայ տիրուհին
 Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից.
 Ու դարձաւ նա լ՛ուռ, դալ՛ուկ, մըտախո՛հ,
 Ու քունը փախաւ սիրունն աչքերից...

VII

Դարձաւ իր կըռւից իշխան Թաթուրը,
 Դարձաւ յաղթական իրեն զօրքի հետ,
 Սըրբեց, պատեանը դըրաւ կեռ թուրը,
 Ճընձութեան ձայնից զողաց Թըմկաբերդ:

Խընջոյք է սարքել Թըմկայ տիրուհին,
 Ճերեկ է արել խաւար գիշերը.
 Հեղեղի նըման հոսում է գինին,
 Ու քէֆ է անում Չաւախքի տէրը:

Պըտոյտ է գալի չըքնաղ տիրուհին,
 Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
 Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
 Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Հապա լըցրէ՛ք, իմ քաջ հիւրեր,
 Բաժակներըդ լիուրի,
 Խըմենք — Աստուած կըտրուկ անի
 Թուրը իմ քաջ Թաթուրի:
 — Է՛յ, Տէր Աստուած կըտրուկ անի
 Թուրը մեր քաջ իշխանի,
 Նըրա շուքը միշտ հանապազ
 Մեր գըլխիցը անպակաս:

Ու թընդում է Թըմուկ բերդը
 Էն աղմուկից խընդութեան,
 Որոտում են տաղն ու երգը
 Գոռ ձայներով յաղթական:

— Էն մըթին ամպից արծի՛ւն է իջնում,
 Սարի արծիւը շեշտակի թափով:
 — Էն Թըմկայ բերդից Թաթուրն է իջնում,
 Թըչնամու հոգին լըցնում սարսափով:

— Էն Թըմկայ ձորում սև ա՛մպն է գոռում:
 Էն շա՞նթն է ճայթում էնպէս ահարկու:
 — Էն Թըմկայ ձորում Թաթուրն է կըռում,
 Էն թուրն է շահում էնպէս ահարկու:
 Ի՛նչ սարի արծիւ կը հասնի քաջին,
 Ի՛նչ Շահ կը կանգնի նըրա առաջին:

Ու չի դադարում երգի հետ վարար
 Կախեթի գինին խելագար հոսել,
 Խըմում են տիկնոջ թանգ կեանքի համար,
 Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Խըմում են կըռուող քաջերի փառքին,
 Որ կըռուի դաշտում կեանք չեն խընայում,
 Եւ ընկածների սուրբ յիշատակին,
 Որ երկընքիցն են այժմ իրենց նայում...

Պըտոյտ է գալի ծաղիկ տիրուհին,
 Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
 Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
 Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Օ՛ֆ, տիրուհի, Աստուած վըկայ,
 էլ չենք կարող մենք խըմել.
 էլ ուժ չը կայ, էլ տեղ չը կայ,
 Շատ ենք խըմել ու յողնել...

Ու հանգչում է Թըմուկ բերգը,
 Պապանձում է ու մարում,
 Հարբած, յողնած տէրն ու զօրքը
 Մըրափում են խաւարում:

VIII

Լուռ ու խաւարչտին կամարների տակ,
 Յողնած ու քընած բաղմութեան վըրով
 Թըռչում են, թըռչո՛ւմ, սեւ չարագուշակ
 Երազներն անեղ, անվերջ խըմբերով:

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը,
 Որ վիշապ օձը եկել է ահա,
 Եկել փաթաթել, իր բերգը պատել,
 Գըլուխը գըրել ետ պոչի վրա:

Ու բարձրացնում է հըրէչն անուելի,
 Իրեն գլուխը բարձրացնում է վեր,
 Բարձրացնում մինչեւ բարձունքը բերդի,
 Մինչեւ Թաթուլի պալատն ու տըներ:

Պառկած է իբրև Թաթուլ իշխանը
 Նազելի կընոջ գըլուխն իր կըրծքին,
 Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
 Թո՛ղ, որ սպանեմ ես էք հըրէչին:

էսպէս է ասում Թաթուլ իշխանը,
 Ու զարհուրանքով տեսնում է յանկարծ,
 Իրեն սիրելի կընոջ գըլխի տեղ
 Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

IX

է՛յ, հըսկեցէ՛ք, ի՞նչ էք քընում,
 Քաջ զինուորներ Թաթուլի.
 Ո՞վ է, տեսէք, տանջւում մըթնում,
 Քուն չի աչքին մօտ գալի:

Ձը լինի թէ յաղթահարւած,
 Ճարը հատած թըշնամին
 Դաւ է դընում մութն ու մեռած
 Կէս գիշերւայ էս ժամին:

Վե՛ր կացէք, վե՛ր, ամբողջ գիշեր
 Մարդ է գընում ու գալի.
 Հէ՛յ, զարթնեցէ՛ք, առիւժ քաջեր,
 Պահապաններ Թաթուլի:

Վե՛ր կացէք, վե՛ր, հարբեցրել է
 Իր յաղթական հիւրերին,
 Բաց է անում դուռն ու դարպաս
 Ձեր դաւաճան տիրուհին:

Դա՛ւ... դա՛ւ... ելէ՛ք... կոչնա՛կ...
 պահնա՛կ...

Ձէնք առէք շո՛ւտ... ձի հեծէ՛ք, ձի՛...
 Ճըռընչում են, գըղըրդում են
 Դարպասները երկաթի...

X

Բաց արաւ ցերեկն իր աչքը պայծառ
 Աշխարհքի վըրա, Զուտիսքի վըրա,
 Աւերակ բերդին, սև ամպի նըման,
 Ծուխն ու թըշնամին չոքել են ահա:

Յաղթութեան փառքով ու գինով հարբած
 Քընած են բերդի և գօրքերն և տէր,
 Ու յաւիտեան էլ մընացին քընած,
 Դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր:

Նըստած է Շահը. նըրա առաջին
 Ահա իրիկւան քէֆի սեղանը.
 Նայում է Շահը անտէր գահոյքին,
 Մտքովն անցնում է աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չըկայ ոչ մի բան,
 Ու մի՛ հաւատալ երբեք ոչ մէկին.
 Ո՛չ բախտի, փառքի, ո՛չ մեծ յաղթութեան,
 Ո՛չ սիրած կնկայ տըւած բաժակին...

Ու լի դառնութեամբ հարցընում է նա
 Դալուկ, մարմարիոն թըմկայ տիրուհուն.
 — Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սև...
 աչեայ,

Միթէ թաքուըը քաջ չէ՞ր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առաւել.
 Մի բարձր ու աղնիւ տղամարդ էր նա.

Կնոջ մատնութեամբ ամբոց չէր առել,
 Չէր եղել կեանքում երբեք խաբեբայ...

Էսպէս տիկինը տըւաւ պատասխան.
 Անհուն ցասումից մըռընչաց Շահը,
 — Հէ՛յ, դահի՛ճ, գոռաց գազանի նըման,
 Դահիճը իսկոյն մըտաւ սրահը:

XI

Դահիճն եկաւ ոտից գըլուխ
 Կարմիր հագած ու արիւն,
 Ու դուրս տարան իր պալատից
 Թըմկայ չըքնաղ տիրուհուն:

Տարան սնտակ էն ժէռ քարից,
 Որ կանգնած է մինչ էսօր,
 Էն ահաւոր քարի ծէրից
 Գըլորեցին դէպի ձոր:

Գէլ ու աղէս եկան հանդից
 Ագահ սիրտը լափեցին,
 Յին ու ագռաւ իջան ամպից,
 Սեւ աչքերը հանեցին:

Անցաւ անտես ու աննըման
 Էն սիրունը աշխարհից,
 Ինչպէս ծաղիկն անցած գարնան,
 Որ չի ծաղկիլ էլ նորից:

Անցաւ զուլում էն մեծ արքան՝
Իրան փառքով ու զօրքով,
Անցաւ Թաթուլն էն յաղթական
Ու իր քաջերն էն կարգով:

Ու նրանցից մենակ անմեռ
էս զրոյցը հասաւ մեզ,
Որ մեզանից յետոյ էլ դեռ
Պէտք է խօսուի միշտ էսպէս:

XII

Հէ՛յ, պարոններ, ահանջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել աղղերք,
Կաւ ուշ զրէք լմ խաղին:

Ամենքս էսպէս հիւր ենք կեանքում
Մեր ծնընդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
էս անցաւոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խօսւում լաւ ու վատ.
Ա՛խ, երանի՛ ով մարդ կը գայ
Ու մարդ կերթայ անարատ:



պ. Արթուր Կ

ՀՀ Ազգային գրադարան



NL0348093

32253

ԳԻՆ՝ 5 ՅՐԱՆՔ

Դիսեկ

Boite Post



n)